

## «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

Երևան, 05 մարտի 2008թ.

### 2008թ. Զբոսաշրջության համաշխարհային մրցունակության զեկույցը և Հայաստանի դիրքը


Զբոսաշրջության համաշխարհային մրցունակության զեկույցը առաջին անգամ տպագրվել է 2007թ-ի մարտի 1-ին Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից (ՋՏՖ): ՋՏՖ-ն երկրների զբոսաշրջության մրցունակությունը գնահատելու նպատակով մշակել է Զբոսաշրջության մրցունակության համաթիվը: Այն բազմաչափ վերլուծություն է երկրի, որպես զբոսաշրջության կենտրոնի, համեմատական ուժեղ և թույլ կողմերը գնահատելու տեսանկյունից: Համաթվի հաշվարկման ժամանակ օգտագործվել են զբոսաշրջության ոլորտի ամենահամապարփակ տվյալների բազաները՝ ինչպես «կոշտ տվյալներ» (WTTC; UNWTO), այնպես էլ հարցումների միջոցով ստացված տվյալներ: Զեկույցի պատրաստման գործին աջակցում են գործընկեր կազմակերպությունները՝ Booz Allen Hamilton, IATA, UNWTO, WTTC, և գործընկեր ինստիտուտների (հետազոտական) համաշխարհային ցանցը: Հայաստանում ՋՏՖ-ի գործընկեր կազմակերպություն է հանդիսանում «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը:

#### Զբոսաշրջության մրցունակության համաթիվ

Զբոսաշրջության մրցունակության համաթիվը բաղկացած է 3 ենթահամաթվերից, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է տարբեր հեմասյուններից:

- Զբոսաշրջության կանոնակարգող դաշտ
- Զբոսաշրջության բիզնես միջավայր և ենթակառուցվածք
- Զբոսաշրջության մարդկային, մշակութային և բնական ռեսուրսներ


Նկար 1. Զբոսաշրջության մրցունակության համաթիվ



2008թ-ին տեղի է ունեցել Զբոսաշրջության մրցունակության համաթվի հաշվարկի մեթոդաբանության փոփոխություն, որի պատճառով հնարավոր չէ միանշանակորեն համեմատել 2 տարիների տվյալները: Ըստ Զբոսաշրջության մրցունակության համաթվի՝ զբոսաշրջության ոլորտում 130 երկրների մեջ աշխարհի ամենամրցունակ երկիրը Շվեյցարիան է, որին հետևում են Ավստրիան և Գերմանիան: Մրցունակությամբ ամենաթույլ երկրներն են Չադը, Լեսոտոն և Բուրունդին:

**Հայաստանի արդյունքները**

Հայաստանն աշխարհում գրավում է 89-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ կորցնելով 15 տեղ: Հայաստանը ԱՊՀ երկրների թվում գրավում է 5-րդ տեղը՝ զիջելով միայն Ռուսաստանին (64), Վրաստանին (72), Ուկրաինային (77) և Ադրբեջանին (79):




*Զբոսաշրջության կանոնակարգող դաշտ (միավորներ 1-7 սանդղակով)*  
Հայաստանը բավականին բարձր դիրքեր է գրավում զբոսաշրջիկների անվտանգությունը ապահովելու տեսանկյունից, քանի-որ բավականին ցածր է ճանապարհային վթարների/պատահարների, հանցագործությունների և

բռնությունների մակարդակը: Հայաստանը նաև կարող է համեմատաբար բարվոք սանիտարահիգիենիկ պայմաններ առաջարկել այցելուներին: Թեպետ անցյալ տարի զբոսաշրջությունը հայտարարվել է գերակա ճյուղ, Հայաստանը բավարար մակարդակով չի իրականացնում մարկետինգային արշավը և երկրի բրենդինգը: Այսպես, ՀՀ տուրօպերատորները 2006թ. հուլիս-2007թ. օգոստոս ամիսներին մասնակցել են 121 զբոսաշրջության ոլորտի կարևոր միջազգային ցուցահանդեսներից ընդամենը 2-ին: Ջրոսաշրջության իրական առաջնայնության ցուցանիշներից է շրջական միջավայրի պահպանմանն եւ նրա կայուն զարգացմանն ուղղված միջոցառումները: Այս առումով, նույնպես, Հայաստանը բավական թույլ դիրքեր ունի ի համեմատություն այլ երկրների:

Ջրոսաշրջության զարգացման կարևոր պայմաններից է երկկողմանի օդային համաձայնագրերի առկայությունը կանոնավոր երկկողմանի չվերթներ այլ երկրների հետ հաստատելու նպատակով: Վիզային ռեժիմի առկայությունը, հիմնականում այն երկրների հետ, ում քաղաքացիները ամենից շատ են ճանապարհորդում, լրացուցիչ խոչընդոտ է հանդիսանում ՀՀ զբոսաշրջության մրցունակության տեսանկյունից:

*Ջրոսաշրջության բիզնես միջավայր և ենթակառուցվածք*



Ըստ զեկույցի բիզնես միջավայրի և ենթակառուցվածքի առումով Հայաստանի միակ առավելությունն է զբոսաշրջության ոլորտի գնային մրցունակությունը: Սակայն այդ առավելությունը հիմնականում պայմանավորված է եղել նրանով, որ հաշվարկի ժամանակ օգտագործվել են 2006թ-ի տվյալները: Հայաստանը աչքի է ընկել գնողունակության պարիտետի բարձր տարբերությամբ,


առաջնակարգ հյուրանոցների սենյակների միջին գների համեմատական մատչելիությամբ: Սակայն գնային մրցունակության վրա բացասաբար է ազդում հարկերի մակարդակը:

Հայաստանի ներկայիս դիրքի վրա բացասաբար են ազդել օդային տրանսպորտային ենթակառուցվածքի որակը, որը պայմանավորված էր Հայաստանից մեկնող ինքնաթիռներում առկա տեղերի սահմանափակ քանակությամբ, թռիչքների ցածր ինտենսիվությամբ, օդանավակայանների սակավությամբ: Թեպետ 2007թթ. հունվար-հուլիս ժամանակահատվածում միջին ամսական կտրվածքով 27.5 ավիաընկերություններ են իրականացրել թռիչքներ դեպի Հայաստան, սակայն սահմանափակ քանակությամբ երկրներից: Վերգետնյա տրանսպորտային ենթակառուցվածքը չի տալիս զբոսաշրջիկներին ազատ հնարավորություն անվտանգ այցելել ցանկացած վայր, քանի որ ճանապարհների որակը այդքան էլ բարձր չէ, երկաթգիծը թերզարգացած է, որոշ դեպքերում ոչ օտիմալ ճանապարհով են զբոսաշրջիկները հասնում ՀՀ զբոսաշրջության վայրեր/կենտրոններ:

1 ITB Berlin, Salon Mondial du Tourisme (France), World Travel Market (London), Holiday World Prague, International Trade Fair for Tourism (Russia), Arabian Travel Market (Dubai), PATA Travel Mart (Pacific Asia Travel Association), China International Travel Mart, Japan Association of Travel Agents (JATA) World Travel Fair, Travel and Tourism Fair (India), American Society of Travel Agents' Trade Show, Travel Mart Latin America, the International Tourism Fair of Latin America

Ջրոսաշրջության մրցունակության տեսանկյունից Հայաստանի ամենամեծ թերությունն է համարվում զբոսաշրջության ենթակառուցվածքը, որը պայմանավորված էր 2006թ. հյուրանոցային համարների սակավությամբ, 2007թ. մեքենաների վարձույթով զբաղվող միջազգային ընկերությունների, ինչպես նաև ՀՀ տարածքում պլաստիկ քարտեր սպասարկող բանկոմատների սակավությամբ:

*Ջրոսաշրջության մարդկային, մշակութային, և բնական ռեսուրսներ*



Հայաստանի մրցակցային առավել-ություններից է զբոսաշրջության դերի գիտակցումը բնակչության կողմից, քանի որ ՀՀ քաղաքացիները բաց են և լավ են տրամադրված օտարերկրյա այցելուների նկատմամբ, ընկերությունների ղեկավարները արտասահմանյի գործընկերներին խորհուրդ են տալիս երկարացնել իրենց այցելությունը Հայաստանում տեսարժան վայրերը դիտելու նպատակով և այլն:

Իսկ 2006թ. զբոսաշրջությունից ստացված եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 5.2 տոկոսը:

Թեպետ զբոսաշրջության ոլորտի ընկերությունները, հեշտությամբ կարող են աշխատանքի ընդունել և ազատել աշխատակիցների, խնդիրը որակյալ աշխատակիցներ գտնելու և նրանց համար վերապատրաստում անցկացնելու մեջ է, քանի որ կրթական համակարգը չի համապատասխանում մրցունակ տնտեսության պահանջներին:

Հայաստանի բնական ռեսուրսները Հայաստանի մրցակցային թերություններից են համարվում, քանի որ Հայաստանը չունի ոչ մի Համաշխարհային բնական ժառանգության վայր: 2005թ. երկրի տարածքի միայն 10 տոկոսն էր պահպանվում որպես ազգային պարկեր, իսկ շրջակա միջավայրի աղտոտվածության մակարդակը բավականին բարձր է: Կենդանիների եւ թռչունների բազմազանությամբ Հայաստանը զբաղեցնում է 97-րդ տեղը:

Թեպետ Հայաստանում կա գրանցված Համաշխարհային մշակութային ժառանգության 3 վայր, և դրանով աշխարհում զբաղեցնում է 54-րդ տեղը, Հայաստանում շատ քիչ թվով մշակութային փառատոներ և միջոցառումներ են անցկացվել 2004-2006թթ. ընթացքում` միջինում կազմելով 0.7 միջոցառում տարեկան:

**Հայաստանը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, ԱՊՀ եւ Միջին Արևելքի երկրների հետ համեմատած**


Հայաստանի արդյունքների վերլուծությունը մատնանշում է այն ոլորտները, որոնց վրա մեծ ուշադրություն պետք է դարձնել: Սակայն այդ նույն երևույթները որքանով են հրատապ բնույթ կրում, կարելի է գնահատել Հայաստանի դիրքերը համեմատելով այլ երկրների հետ` մասնավորապես համադրելի համարվող երկրների հետ: Որպես այդպիսի երկրներ դիտարկվել են Արևելյան Եվրոպայի այն երկրները, որոնք հարուստ մշակութային անցյալ ունեն և/կամ

2 Միջազգային ասոցիացիաների կողմից կազմակերպված հանդիպումներ, որոնց առնվազն 50 մարդ է այցելել և որոնք կանոնավոր բնույթ են կրում և որոնց ացկացման վայրը փոփոխվում է առնվազն երեք երկրների մեջ:




**Ջրոսաշրջության բիզնես միջավայր և ենթակառուցվածք**

Ըստ զբոսաշրջության բիզնես միջավայր և ենթակառուցվածք ենթահամաթվի՝ Հայաստանը բավականին թույլ դիրքեր է զբաղեցնում՝ 108-րդ տեղը՝ մեծապես զիջելով Արևելյան Եվրոպայի երկրներին և Միջին Արևելքի տարածաշրջանի երկրներին: ԱՊՀ երկրների շարքում Հայաստանը առաջ է անցել միայն Տաջիկստանից և Ղրղզստանից: Արևելյան Եվրոպայի երկրների շարքում առաջատարը Էստոնիան է, ինչը պայմանավորված է հիմնականում զբոսաշրջության, ՏՀՏ և վերգետնյա տրանսպորտի ենթակառուցվածքների զարգացվածության մակարդակով: ԱՊՀ երկրների շարքում առաջատար դիրքեր են զբաղեցնում Ռուսաստանը, Ուկրաինան, Ադրբեջանը: Հայաստանը իր զբաղեցրած տեղով ԱՊՀ երկրների շարքում մոտ է Մոլդովային: Երկու երկրներն էլ բավականին լավ արդյունքներ են գրանցել զբոսաշրջության ոլորտում գնային մրցունակության հենասյունով, սակայն ի տարբերություն Հայաստանի՝ Մոլդովան առաջ է անցել ՏՀՏ ենթակառուցվածքի զարգացվածության հաշվին: Իսրայելը առաջատար դիրքերում է Միջին Արևելքի երկրների շարքում, մասնավորապես զարգացած ՏՀՏ ենթակառուցվածքի շնորհիվ:



**Ջրոսաշրջության մարդկային, մշակութային և բնական ռեսուրսներ**

Ըստ զբոսաշրջության մարդկային, մշակութային, և բնական ռեսուրսներ համաթվի Արևելյան Եվրոպայի առաջատարը Չեխիան է, քանի որ այդ երկիրը ունի մշակութային և բնական հարուստ ռեսուրսներ: Այս համաթվով Էստոնիայի համեմատաբար բարձր դիրքը պայմանավորված է զբոսաշրջիկների նկատմամբ բնակչության ջերմ վերաբերմունքով, ՀՆԱ-ի մեջ զբոսաշրջությունից ստացվող եկամուտների համեմատաբար բարձր մասնաբաժնով և այլն: ԱՊՀ տարածաշրջանում Հայաստանը միայն զիջում է Ռուսաստանին և Վրաստանին: Սակայն Ռուսաստանի քաղաքացիները այդքան էլ բարյացակամ չեն օտարերկրյա այցելուների նկատմամբ: Ըստ զբոսաշրջության մարդկային, մշակութային, և բնական ռեսուրսներ համաթվի Միջին Արևելքում տեղի է ունեցել տեղերի փոփոխություն՝ Թուրքիան փոխարինել է Իսրայելին, որպես առաջատար: Այստեղ ևս Հայաստանը հետ է մնում միայն Սիրիայից:



## Առաջնայնություններ

### Առաջնայնություններ. մասնավոր հատված

- Մասնակցություն հիմնական ցուցահանդեսներին նպատակային շուկաներում
- Պատմամշակութային տարրերով էկոզբոսաշրջության և արկածային զբոսաշրջային փաթեթների առաջարկում
- Ներդրումներ աշխատակիցների վերապատրաստման մեջ
- Նպատակաուղղված առաջնորդում և մարկետինգային ռազմավարություն

## Հարակից ոլորտներ

### Ֆինանսական հատված

- Բանկոմատների քանակի ավելացում Բնական ռեսուրսներ շահագործող ոլորտներ
- Բնապահպանական գործարար պրակտիկայի որդեգրում և տեխնոլոգիաների կիրառում

## Առաջնայնություններ. կառավարություն

- Կայուն տուրիզմի գերակայություն
- Շրջակա միջավայրի ավելի խիստ կանոնակարգում և դրանց կիրառում
- Աջակցություն մասնավոր հատվածին նպատակային շուկաներում հիմնական ցուցահանդեսներին մասնակցության համար
- Երկրի բրենդի ձևավորում համագործակցելով մասնավոր հատվածի հետ
- Խթանների կիրառում 2-3 աստղանի հյուրանոցների կառուցման համար
- “Բաց երկնքի” քաղաքականության կիրառում
- Ներդրումներ ենթակառուցվածքում, հատկապես մարզերում
- Մասնագիտացված կրթական նախաձեռնություններ

## «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն (EV)

Հովսեփ Էմին 123

Երևան-0051 Հեռ. +374 10 21 97 40

Էլ-փոստ՝ [info@ev.am](mailto:info@ev.am)

[www.ev.am](http://www.ev.am)